Մեյրան, Ֆրանսիա

Երևան, Հայաստան

Société des Trois Vallées
Mountain Resort Consulting
Քուրշեվել, Ֆրանսիա



www.consultingbymdp.com

Դեպի Արագած լեռ

| Հավելված 1 : Լեռնադահուկային հանգստավայր եւ 4 սեզոնի նախագծի ընդհանուր ծրագիր

Թողարկման ամսաթիվը :	**Դեկտեմբեր 2020**
Նախագիծ # :	**20201616**
Փաստաթղթի հղում #:	**20TEC0750-G**
Հեղինակ :	**C.R/S.G/A.M**

Բովանդակություն

1. Լեռան բնութագիրը
2. Ընդհանուր տեղեկություն լեռնադահուկային տարածքի նախագծման մասին
3. Նախագծի դիզայնը
4. Լեռնադահուկային համալիրի կառուցման ժամանակացույցը
5. Լեռնադահուկային գոտու չափագրում
6. Ներդրում երեք փուլով

Ծրագրի գաղափարը

- Միջազգային չափորոշիչներին համապատասխան լեռնային հանգստավայր Արագած լեռան վրա
- Սա 4 սեզոնի համար նախատեսված նախագիծ է, որը գործելու է ամբողջ տարվա ընթացքում՝ լեռնային մարզաձեւերի լայն շրջանակով
- Ձմռանը լեռնադահուկային սպորտը համարվում է ամենագրավիչ զբաղմունքը՝ նպաստելով ամբողջ նախագծի զարգացմանը
- Սա պետք է նպաստի ամբողջ Արագածոտնի մարզի զբոսաշրջության զարգացմանը
- Հանգստավայրի հիմնական մասը պետք է գտնվի 2500 մ-ից ցածր տեղանքում
- Գաղափարը լեռնադահուկային հանգստավայրի ամբողջովին ինտեգրված լինելն է (համալիրն ունենալու է լեռնադահուկային գոտի, հյուրանոցներ, ռեստորաններ, խանութներ, սարքավորումներ, ծառայություններ)՝ ավելի արդյունավետ շահագործման համար



Լեռան բնութագիրը

Գտնվելու վայրը



Ձմեռային այցելություն

2020 թ. մարտի ձմեռային այցելության ժամանակ երկու GPS հետք է գրանցվել՝ ուղղաթիռով եւ դահուկներով սահելով.



Լեռան ընդհանուր քարտեզը



Կլիմա եւ ձյան ծածկույթ

- Ձյան ծածկույթը բաց տարածքներում բարակ է, չոր կլիմայի (<100 մմ / ամիս) եւ քամու ազդեցության պատճառով
- Ձմռանը քամին հիմնականում փչում է հյուսիսից, հարավից եւ արեւմուտքից՝ ավելի շատ պաշտպանելով լեռան արեւելյան լանջերը
- Քամու պատճառով ձյան կուտակումներ կարող են լինել թալվեգների եւ ավելի ցածրադիր վայրերում
- Ըստ Ամբերդի օդերեւութաբանական կայանի (2000 մ) տվյալների՝ 4-5 ամիս ջերմաստիճանը 0°C-ից ցածր է



Կլիմայի փոփոխականությունը Ամբերդի օդերեւութաբանական կայանում

- Արեւային օրերն ընդհանուր առմամբ շատ են (տարեկան 2450 ժամ), որը գրեթե նույնն է, ինչ հարավային Ֆրանսիական Ալպերում
- Քամու միջին արագությունը մեկ ամսվա ընթացքում մոտ 1.6 մ/վ է (2000 մ), ինչը լեռնադահուկային հանգստավայրի համար քամոտ չի համարվում, բայց սա պետք է հաշվի առնել դահուկուղիները նախագծելիս
- Քամու առավելագույն արագությունն ու պոռթկումն ավելի մեծ են (ձմռան ամիսներին 30 մ/վ, իսկ պոռթկումը՝ 40 մ/վ արագությամբ)
- Գոյություն ունի սեզոնային քամու երկու հիմնական տեսակ
  - Ամռանը քամիները հիմնականում փչում են հարավից եւ հյուսիսից
  - Ձմռանը քամիները փչում են հարավից, հյուսիսից եւ արեւմուտքից

ԱՐԵՒԻ ԵՒ ՔԱՄՈՒ ԳԾԱՊԱՏԿԵՐ. Ամբերդ (2071 մ)



ՁՄԵՌԱՅԻՆ ԵՒ ԱՄԱՌԱՅԻՆ ՔԱՄԻՆԵՐ. Ամբերդ (2071 մ)



← Օդերեւութաբանական կայանը գտնվում է Ամբերդում (2071 մ) Նախատեսված տարածքին մոտ, լեռան հարավային լանջին

2015-2019 թվականների ձյան միջին ծածկույթը տասնօրյա ժամկետում



- 2000 մ բարձրության վրա ձյան ծածկույթը դեկտեմբեր-ապրիլ մնում է շուրջ 20 շաբաթ, բայց բարակ շերտով (լավագույն դեպքում՝ ընդամենը 1 մ-ից ավելի)
- 3000 մ բարձրության վրա ձյան ծածկույթը կրկնակի հաստ եւ խիտ է

Բարձրադիր քարտեզ



- Ընդհանուր գոտին տեղակայված է լինելու բարձր դիրքում (գրեթե 4000 մ վրա)
- Հովիտն արդեն 2000 մ բարձրության վրա է
- Լեռնադահուկային գոտու համար բնական ձյան ծածկույթով լեռան բարձր դիրքը բավականին հարմար է, բայց հիմնական հանգստավայրը պետք է գտնվի ոչ ավելի, քան 2500 մ բարձրության վրա

Կողմնորոշման քարտեզ



- Հյուսիսային դիրքը դահուկուղիների համար ավելի հարմար է, քանի որ ձյունն ավելի լավ է
- Հարավային դիրքը կատարյալ է բնակելի կառույցների, ռեստորանների, բայց ոչ՝ դահուկներով սահելու համար
- Արարատ լեռը երևում է լեռան հարավային կողմից

Լանջերի քարտեզ



Հարմար է դահուկներով սահելու համար		
	0 – 8 %	**Հարթ տարածք** *Շենքեր, խանութներ*
	5 – 15 %	**Դյուրին** *սկսնակների համար դահուկուղիներ*
	15 – 27 %	**Միջին բարդություն** *միջին բարդության դահուկուղիներ*
	27 – 40 %	**Բարդ** *բարդ դահուկուղիներ*
	40 – 70 %	**Պրոֆեսիոնալ** *Պրոֆեսիոնալների համար դահուկուղիներ*
	> 70 %	**Ժայռեր** *Հարմար չեն դահուկներով սահելու համար*

Դահուկուղիներ ու հոսքեր



Տարածքն ունի՝

- ✓ Տարբեր դահուկուղիներ՝ հարմար միջին բարդության դահուկներով սահելու համար (եթե նույնիսկ դահուկուղիները շատ հարթ են)
- ✓ Ընդարձակ, լայն, հարթ գոտի կոնվերգենցիայի ժամանակ
- ✓ Ճիշտ կողմնորոշում

→ Հարմար է լեռնադահուկային գոտու զարգացման համար

Եզրակացություն. ծրագրի համար նախընտրելի գոտիները





Հիմնական տեղեկություն լեռնադահուկային համալիրի մասին

Ճոպանուղիների նախագծում

Ճոպանուղիների տեսակները

- Փոխակրիչներ / Շարժվող անցուղիներ

Փոխակրիչները հարմար են սկսնակների համար նախատեսված տարածքում օգտագործելու համար: Այն հեշտ կիրառելի է դահուկով, սահնակով, սնոուբորդով սահող բոլոր այցելուների համար

Ճոպանուղիները ունեն ծածկ, ինչը թույլ է տալիս այցելուներին պաշտպանել ցրտից եւ քամուց, այն հիմնականում կիրառվում է տեղումների ժամանակ

Ճոպանուղիները դանդաղ են աշխատում (առավելագույնը 0,7 մ/վ-ից մինչեւ 1 մ/վ) եւ սահմանափակվում են մինչեւ 100 մ հեռավորության վրա տեղափոխումներով: Մարզուղին պետք է մնա առավելագույնը 10-15% բարձրության սահմաններում

- Քարշակային ճոպանուղիներ

Քարշակային ճոպանուղիները հարմար են սկսնակների համար նախատեսված տարածքներում օգտագործելու համար: Այս լեռնադահուկային ճոպանուղին քիչ տեղ է զբաղեցնում եւ կարող է տեղադրվել հենց դահուկուղուն կից

Այն դժվար չէ օգտագործել, եթե նույնիսկ մարզուղին ցածր է կամ հավասար մակերեւույթով է: Ոչ մի վտանգ չկա, նույնիսկ եթե ուղեւորն ընկնի

Քարշակային ճոպանուղիների օգտագործումը պահանջում է, որ դահուկորդներին վեր բարձրացնող ուղին ապահով լինի, ուստի ճոպանուղին պետք է տեղադրվի անմիջապես մարզուղուն կից

Քարշակային ճոպանուղիները ավելի հարմար են սկսնակների համար նախատեսված տարածքներում օգտագործելու համար, որտեղ կան դահուկուղիներ, որոնք ավելի երկար չեն, քան ճոպանուղիների սահմանները

Ճոպանուղիների նախագծում

Ճոպանուղիների տեսակները

- <u>Ֆիքսված սեղմակով բազկաթոռային ճոպանուղի</u>

Ֆիքսված սեղմակով բազկաթոռային ճոպանուղին ունի նստատեղեր եւ շարժվում է կայուն արագությամբ: Սա համեմատաբար կարճ տարածությունների միջեւ դահուկորդներին տեղափոխելու համար նախատեսված միջոց է

Նստելն եւ իջնելը սկսնակների համար կարող է դժվարություն ներկայացնել: Ուստի արագությունը պետք է ցածր լինի (2.3 մ/վ-ից պակաս)

Ֆիքսված սեղմակով բազկաթոռային ճոպանուղու առավելությունը համեմատաբար ցածր գինն է

Ի տարբերություն քարշակային ճոպանուղիների, դրանք կարող են օգտագործվել խոչընդոտների (ճանապարհների, դահուկուղիների) վրայով անցնելու համար եւ չեն ստեղծում անանցանելի պատնեշ, ինչը կարող է լինել օղակապով կամ «ափսեով» ճոպանուղիներով տեղափոխվելիս



Ճոպանուղիների նախագծում

Ճոպանուղիների տեսակները

- Անջատվող սեղմակով ճոպանուղի

Անջատվող սեղմակով ճոպանուղին ավելի արագ է շարժվում (5 – 6 մ/վ արագությամբ) եւ նվազեցնում է արագությունը կայանին մոտենալիս

Այս տեսակի ճոպանուղին ավելի հարմար է, քանի որ նստելն ու իջնելն կատարվում են փոքր արագության վրա

Հիմնական թերությունը դրա համար ներդրման եւ այլ ծախսերն են, ինչպես նաեւ կայանների չափերը, որոնք շատ ավելի մեծ են, համեմատած ֆիքսված սեղմակով ճոպանուղիների հետ

- Անջատվող սեղմակով գոնդոլ

Անջատվող սեղմակով գոնդոլը հիմնված է նույն սկզբունքի վրա, ինչ անջատվող սեղմակով ճոպանուղին, բացառությամբ, որ նստատեղերը փակ խցիկներում են

Սա բոլոր այցելուներին, ներառյալ հետիոտներին, առավել անվտանգ տեղափոխելու միջոց է

Գոնդոլը նաեւ բարձրանալիս այցելուներին պաշտպանում է ցրտից

Բայց գոնդոլից օգտվելու համար դահուկորդները պետք է հանեն իրենց դահուկները, ուստի սա ամենահարմար տրանսպորտային միջոցը չէ, եւ նպատակը միայն դահուկուղիները սպասարկելն է

Սրա հիմնական թերությունը ներդրման արժեքն է, քանի որ խցիկներն ավելի թանկ են

Ճոպանուղիների նախագծում

- Ճոպանուղիների տեսակները
  - Բազմաճոպանային տեխնոլոգիա (անջատվող)

Գոնդոլները կարող են նաեւ նախագծվել բազմաճոպանային տեխնոլոգիայի հիման վրա (3 ճոպան՝ մեկի փոխարեն)՝ հնարավորություն տալով ավելի մեծ խցիկներ, ավելի մեծ տարողություն եւ երկար տարածություն կայանների միջեւ

Սա օգտագործվում է հատուկ դեպքերի ժամանակ. դժվար տեղանքով երկար ճանապարհ անցնելու, բարձր հենարանների եւ մեծ հզորության պահանջի ժամանակ

Ներդրման չափը հնարավորություն չի տալիս այն հաճախ օգտագործել, սակայն դահուկային համալիրների համար նախընտրելի է վերջինիս առկայությունը: Կայանները եւ պահեստները նույնպես բավականին մեծ են

- Բազմաճոպանային տեխնոլոգիա (հետ ու առաջ)

Հետ ու առաջ շարժվող բազմաճոպանային տեխնոլոգիան սովորաբար անվանում են «ճոպանուղի»: Այս տեխնոլոգիան տասնամյակներ շարունակ օգտագործվել է ամբողջ աշխարհում՝ մարդկանց փոխադրման համար

Տեխնոլոգիան պարզ է. այն բաղկացած է երկու խցիկից, որոնք ամրացված են ճոպանին: Երկու խցիկները միաժամանակ շարժվում են, եւ ամբողջ համակարգը կանգ է առնում, երբ խցիկները գտնվում են կայաններում

Փակ եւ խոշոր այս տրանսպորտային միջոցի շնորհիվ (30-150 մարդ) ճոպանուղին կարող է տեղափոխել բոլոր տեսակի այցելուներին՝ իրենց դահուկներով, սահնակներով

Այս տեխնոլոգիան թույլ է տալիս կայանների միջեւ երկար տարածություն, ինչպես նաեւ անսահմանափակ թվով տեղափոխումներ: Սա ամենահարմար տարբերակն է բարդ տեղանքների համար

Հիմնական թերությունը ներդրման գինն է

Ճոպանուղիների նախագծում

Այլ սարքավորումներ

- <u>Անջատվող ճոպանուղիների պահեստային ավտոտնակներ</u>

Անջատվող ճոպանուղիները (ճոպանուղիներ կամ գոնդոլներ) խորհուրդ է տրվում պահել գործող տարածքից դուրս գտնվող կայանատեղիներում՝ նյութի դիմացկունություն եւ եղանակային պայմաններին դիմակայելու համար (ուժեղ քամիներ, փոթորիկներ եւ այլն)

Կայանատեղիները գտնվում են ստորին կամ վերին կայանի հարեւանությամբ եւ կարող են մեծ տարածք զբաղեցնել

Գոնդոլները կարող են պահվել անմիջապես կայաններում՝ հատուկ կայանատեղի չկառուցելու համար

- <u>Կայանի պաշտպանություն</u>

Այցելուների հարմարավետությունը բարելավելու եւ կայանները վատ եղանակից (քամի եւ ձյուն) պաշտպանելու համար անհրաժեշտ են կայանների շուրջը հիմնել շենքեր, որոնք ոչ աշխատանքային ժամերին կփակվեն ծալովի դարպասներով

Գրադիենտների եւ դահուկուղիների դասակարգում



8%	15%	27%	40%	70%	
Հարթ տարածք 8%-ից ցածր թեքությամբ դահուկուղիներով հնարավոր չէ սահել: Այս գոտիները հարմար են բնակելի տարածքների, սակայն ոչ դահուկներով սահելու համար	**Դյուրին տարածք** 10%-ից ցածր թեքությամբ դահուկուղին հարմար է սկսնակների համար	**Միջին բարդության տարածք** Հարմար է միջին բարդության դահուկուղիների համար	**Բարդ տարածք** Հարմար է բարդ դահուկուղիների համար	**Expert** 40%-ից բարձր թեքության դեպքում գրադիենտը շատ կտրուկ է դառնում դահուկուղիների համար: Հարմար է միայն պրոֆեսիոնալ դահուկորդների համար	**Ժայռ** 70%-ից բարձր թեքությունը չափազանց կտրուկ է եւ հնարավոր չէ դահուկներով սահել: Եւրոպայում ամենաբարդ դահուկուղիների թեքությունը հասնում է առավելագույնը 70-75%-ի

ԴԱՀՈՒԿԱՎԱԶՔԻ ՀԱՄԱՐ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ՄԱՐԶՈՒՂԻՆԵՐ

Դահուկուղու տեսակ

Դյուրին տարածք
Սկսնակների համար դահուկուղիներ

Միջին բարդության տարածք
միջին բարդության դահուկուղիներ

Բարդ տարածք
Բարդ դահուկուղիներ

Պրոֆեսիոնալ տարածք
Պրոֆեսիոնալների համար դահուկուղիներ

Քուրշեւել լեռնադահուկային զոտու քարտեզի օրինակ



Սկսնակների գոտի

Ձյան ավելի հաստ շերտով գոտին նախատեսված է լինելու սկսնակների համար՝ դյուրին դահուկուղիներով եւ հարմար ճոպանուղիներով

Սա դահուկներով սահել սովորելու լավագույն գոտին է՝ հետաքրքիր հարմարություններով ու անիմացիաներով

Այս վայրը պետք է հասանելի լինի սկսնակներին՝ համալիրի եւ իր հարմարությունների հետ մեկտեղ

Սկսնակների անվտանգությունը պետք է երաշխավորված լինի

Ժամանցային գոտի



Ժամանցային գոտի

«Ժամանցային գոտու» կարեւորությունը լեռնադահուկային համալիրում

Դահուկավազքը պետք է համարվի ոչ միայն մարզաձեւ, այլ նաեւ ժամանց: Այսօր դահուկորդներն ավելին են փնտրում, քան պարզապես դահուկուղիներով սահելը: Լեռնադահուկային գոտին պետք է նաեւ դիտարկել որպես զվարճանքի կենտրոն: Սա է դահուկներով սահել սովորելու հաջողության բանալին: «Ժամանցային գոտին» պետք է ներառի դահուկավազքի տարբեր մակարդակներ՝ հասանելի լինելով բոլոր այցելուներին.

- **Ձմեռային պուրակ / ընտանեկան պուրակ**

  Այս գոտին, որը հիմնականում փակ է լինում, ներառում է բազմապիսի ատրակցիոններ՝ բատուտ, սնոուբորդինգ, «Բիգ էյր», «Հալֆ փայփ» եւ այլն

- **Լեռնադահուկային մրցավազք՝ որոշակի ժամանակահատվածում**

  Ուղիղ, բայց չնչին թեքությամբ դահուկուղի, որի վերջում կա արագաչափ՝ դահուկորդի արագությունը որոշելու համար

- **Լեռնադահուկային մրցավազք՝ զուգահեռ նշագծված ձողերով**

  Սա մի քանի դահուկորդի համար նախատեսված երկթեք դահուկուղի է՝ նշագծված ձողերով եւ ժամանակի թայմերով

- **Մրցավազքային դահուկուղի**

  Բազմաթիվ ոլորաններով դահուկուղի, որով միաժամանակ կարող են սահել մի քանի դահուկորդ

- **Ջրային սահարան**

  Տարածքը նախատեսված է արագություն կամ թափ հավաքելու համար: Դրան հաջորդում է ջրային գոտին, որը պետք է անցնել դահուկներով: Սա պրոֆեսիոնալ դահուկորդների համար իմպրովիզացված շոու ստեղծելու միջոց է ձմեռային սեզոնի վերջին, երբ ջերմաստիճանն ավելի տաք է

- **Գիշերային դահուկավազք**

  Երեկոյան կամ գիշերային ժամերին դահուկներով սահելու համար շատ կարեւոր է ունենալ լուսավորված դահուկուղիներ: Դահուկուղին պետք է հեշտ հասանելի լինի եւ երեւա նույնիսկ բնակելի գոտուց, ինչը դահուկորդների մեջ հետաքրքրություն կառաջացնի փորձել գիշերային դահուկավազքը՝ այդկերպ ներգրավելով ավելի մեծ թվով այցելուների

Որպեսզի այս դահուկուղիները գրավեն այցելուներին, պետք է ապահովել դրանց դյուրին հասանելիությունը՝ ճոպանուղիների միջոցով: Ավելին, այդ ճոպանուղիները պետք է լավ երեւան դահուկուղիներից կամ լեռան վրա գտնվող ռեստորանային համալիրներից:

Ժամանցային գոտի. օրինակներ

- **« Mille 8 ընտանեկան ձմեռային պուրակ (Լեզ Արկ, Ֆրանսիա)**
  - Դարձնելով փորձն ավելի զվարճալի

LES ARCS
Paradiski

MILLE 8

Ժամանցային զոտի. օրինակներ

- **Yeti Park (Մերիբել, Ֆրանսիա)**
  - Պատմությունը դարձնել արկած

Ժամանցային զոտի. օրինակներ

- Western Ski Park (Քուրշեւել, Ֆրանսիա)

Մանկական լեռնադահուկային զոտի ամերիկա-արեւմտյան ոճով, ներառյալ՝ դիզայն, նետաձգություն, խորոված



Սահնակուղի

Ոչ լեռնային մարզաձեւեր

Ոչ լեռնային մարզաձեւերը համալիրում հանգստի գրավչության կարեւորագույն տարրերից են

Չնայած դահուկասահքի դերը համալիրում էական է, չափազանց կարեւոր է շեշտել հանգստավայրի՝ չորս սեզոնի համար նախատեսված լինելը: Այցելուների մեծ մասը դահուկորդներ չեն, բայց փնտրում են մարզաձեւեր բնության գրկում: Այս կարգի մարզաձեւերը պետք է համապատասխանեն որոշ չափորոշիչների

- Հարմար լինեն ամբողջ ընտանիքի համար
- Լինեն հեշտ հասանելի եւ անվտանգ երեխաների համար
- Գործեն ամբողջ տարվա ընթացքում
- Բավարարեն բիզնես ընկերությունների եւ համալսարանների / ամառային եւ ձմեռային ճամբարների կարիքները
- Հարմար լինեն դպրոցական ուսուցման համար
- Խթանեն այցելությունները՝ հետաքրքիր շոուների եւ միջոցառումների միջոցով

Մարզաձեւերը պետք է տարբեր աստիճանի դժվարություն ներկայացնեն ՝ այցելուներին առաջընթացի հնարավորություն ընձեռելով: Կարեւոր է նաեւ ապահովել սպասարկման բարձր մակարդակ՝ ներառելով զբոսավարներ եւ մարզիչներ:

Մարզաձեւեր սկսնակների համար

Մարզաձեւեր ընտանիքների համար

Ադրենալինը բարձրացնող մարզաձեւեր

Լեռնային մարզաձեւեր

- Լեռան ստորոտը կատարյալ վայր է՝
  - Երեխաների եւ ընտանեկան միջոցառումների կազմակերպման համար, որոնց կարելի է այցելել ամբողջ օրվա ընթացքում, ինչպես նաեւ դահուկավազքից հետո
  - Դիտարժան միջոցառումների եւ ցուցահանդեսների համար

Միջոցառումներ

Լեռնային հանգիստ եւ ռեստորանային համալիրներ

ARAGATE INVESTMENTS

Բարձրադիր ռեստորանների եւ զբոսախնջույքների համար նախատեսված սենյակների օրինակներ. Բոլորը՝ համայնապատկերային տեսարանով եւ դեպի հարավ նայող բաց կամ ապակեպատ պատշգամբով

Տեսարաններ դիտելու եւ զբոսախնջույքի գոտի

- Պետք է տեղադրվեն լեռնադահուկային գոտու որոշ վայրերում (լեռնադահուկային ճոպանուղիների վերին հատվածում կամ դահուկուղիների երկայնքով)
- Կարող է լինել հանգստի գոտի՝ զբոսախնջույքների համար նախատեսված սեղաններով կամ պարզապես նախագծված կառույց՝ տեսարանն ու բնապատկերն ընդգծելու համար

Սառցե եւ ձյունե քանդակներ

- Ձյունե քանդակներ կամ քարանձավներ՝ ժամանակավոր կամ մշտական ցուցադրություն համար

Արվեստ ձյան վրա

- Քուրշեւելի օրինակը (Ֆրանսիա)

Լեռներն իրենց գեղեցիկ տեսարաններով կատարյալ ֆոն են արվեստի ցուցահանդեսների համար՝ թե՛ ժամանակավոր, թե՛ մշտական

Richard Orlinski

Julien Marinetti

COURCHEVEL
SAVOIE - FRANCE

Ամառային մարզաձեւեր

- Ժամանց եւ սպորտ ողջ ընտանիքի համար

Ամառային մարզաձեւեր

- Մարզում, ադրենալին եւ սպորտ բոլորի համար

Տեսարան դեպի Արարատ

Հանգստավայրից հրաշալի համայնապատկերային տեսարան է բացվում դեպի Արարատ եւ Արագած լեռները

Ձմռանը՝ դահուկորդների, իսկ ամռանը՝ արշավականների համար մեծ հաճույք է վայելել գեղեցիկ բնապատկերների՝ լեռների եւ լճերի համայնապատկերային տեսարանը

Համայնապատկերային տեսարանը ծրագրի հզոր կողմերից մեկն է եւ պետք է ընդգծվի ծրագրի միջոցով ամբողջ տարվա ընթացքում

Տեխնիկական տարածքներ

← Ձյունը մաքրող սարքերի կայանատեղիների եւ այլ տեխնիկական տարածքների օրինակ
Պետք է հասանելի լինեն ճանապարհներից եւ դահուկուղիներից

Հիմնական ճոպանուղիների վերին հատվածում տեղակայված պարեկի եւ պահեստային շենքի օրինակ →

← Ճոպանուղիների պահպանման եւ տեխնիկական տարածքի օրինակ

Ձնարտադրման համակարգ եւ տեխնոլոգիա

Լեռնադահուկային տարածքը ձնարտադրման համակարգով սարքավորելն անհրաժեշտ է սեզոնի ընթացքում ձյան լավ ծածկույթ ապահովելու համար

Ձյուն արտադրելու համար անհրաժեշտ ցանցը պետք է կառուցվի արհեստական լճի (ջրամատակարարման համար) եւ պոմպային տեղանքի (արտադրության համար) միջեւ՝ ձնարտադրության կանոնավոր պարբերականությամբ

Գարնանը գետերի կոնվերգենցիայի ժամանակ ջուրը մղվում է, այնուհետև ամռանն ու աշնանը հավաքվում է արհեստական լճում և ծառայում է ձնարտադրության համար

Ազատ ելումուտով դահուկուղիներ. օրինակներ

ARAGATE INVESTMENTS

- Քուրշեւելի փորձի ուսումնասիրություն (Ֆրանսիա)

Դահուկուղիներն անցնում են համալիրի միջով, ուստի տնակների մեծ մասը ներառում է ելումուտով դահուկուղիներ եւ կարող է օգտագործվել նաեւ սկսնակների կողմից: Հիմնական դահուկուղիներն հատվում են կամուրջների կամ թունելների հետ՝ բոլոր բնակավայրերը սպասարկելու համար:



Ծրագրի նախագծում

Մեթոդաբանություն

- Լեռնադահուկային տարածքի նախագծումը ներառում է՝
  - Ձմեռային (մարտ 2020) եւ ամառային (սեպտեմբեր 2020) այցելությունները
  - Քարտեզների եւ մուտքային տվյալների հիման վրա կատարված տեսական վերլուծությունը
- Հաջորդ սլայդները ցույց են տալիս նախագծման հիմնական սկզբունքները, որոնք հիմնված են տեղագրության (դահուկուղիներ, կողմնորոշում տեղանքում, բարձրություն) եւ փորձագետների կողմից ձմեռային այցելությունների վրա
- Այն թույլ է տալիս որոշել հանգստավայրի համար նախատեսված հարթ տարածքի ներուժը եւ լեռնադահուկային սպորտին հարմար լանջերը
- Չափագրումը հիմնված է միջազգային գործակիցների վրա, որի նպատակն է ունենալու լեռնադահուկային սպորտի տարածքի մակերեսի ընդհանուր նկարագրությունը եւ ճշգրիտ հավասարակշռություն դահուկուղիների եւ ճոպանուղիների միջեւ
- Սա ցույց է տալիս լեռան ներուժը, բայց համալիրի զարգացումը պետք է իրականացվի փուլ առ փուլ, առնվազն 10 տարվա ընթացքում



Լեռնադահուկային զոտի. դահուկավազք

ARAGATE INVESTMENTS

- Սկսնակների տարածք
- միջին բարդության դահուկավազք – միջին բարդության դահուկուղիներ
- Բարդ դահուկուղիներ
- Պրոֆեսիոնալների տարածք
- Ժամանցի զոտի (բոլորի համար)
- Մրցումներ
- Ձմեռային պուրակ
- Գիշերային դահուկավազք



Հիմնական փաստեր եւ թվեր

- Դահուկուղիների քանակը ≈ **80**
- Դահուկուղիների ընդհանուր երկարությունը ≈ **125 կմ**
- Դահուկասահքին հարմար տարածք ≈ **4000 հա**
- Ճոպանուղիների քանակը ≈ **30**
- Ամենամեծ ուղղահայաց անկումը : **1 900 մ**
- Դահուկասահք՝ **2000 - 3900 մ**

Լեռնադահուկային զոտի. այլ ձմեռային մարզաձեւեր

ARAGATE INVESTMENTS

- Լեռնային ռեստորաններ
- Համայնապատկերային դիտակետ
- Կացարան
- Սահնակավարություն
- Փչվող սահնակ
- Դահուկավազք եւ բիաթլոն
- Դահուկներով քայլք
- Սահադաշտ
- Զնազնացություն
- Շներով սահնակավարություն
- Իգլու / Սառցե բանդակներ
- Լիճ



- Ձմեռային մարզաձեւեր, որոնք պետք է զարգանան համալիրի հսկայական հարթ տարածքում. դահուկավազք, բիաթլոն, դահուկներով քայլք, ձնազնացություն, շներով սահնակավարություն եւ այլն
- Զվարճանքի եւ դահուկավազքի զոտի համալիրի շրջակայքում՝ կարճ ճոպանուղիներով + երկար դահուկավազք՝ 1-ին զոնդոլով
- Գլխավոր զոնդոլային ճոպանուղու երկայնքով իրականացվող լեռնային մարզաձեւեր՝ զոնդոլների կայանի կողքին համայնապատկերային տեսարանով բարձրակարգ ռեստորանի տեղակայմամբ

Այլ ձմեռային մարզաձևեր

▲ Փչվող սահնակ
▼ Դահուկներով քայլք

▲ Դահուկավազք
▼ Ձնագնաց

▲ Բիաթլոն
▼ Ձներով սահնակավարություն

Ամառային լեռնային մարզաձեւեր



- Ամառային մարզաձեւերի մեծ մասն անցնում է հիմնական գոնդոլային ճոպանուղու երկայնքով
- Հնարավոր են բազմապիսի արշավային եւ հեծանվային մարզաձեւեր, որոնք իջնում են դեպի հանգստավայր կամ պտտվում լճի շուրջը
- Քարի լիճ համալիրը՝ որպես երկրորդ ամառային հանգստավայր լեռան գագաթին

Համալիրի ֆունկցիոնալությունը

- Արագեյթ համալիրը ծրագրի կենտրոնական մասն է, որը ներառելու է հյուրանոցների, ռեստորանների, զբոսաշրջային գործունեության մեծ մասը
- Քաղաքային դիզայնը պետք է ճշգրտորեն նախագծված լինի եւ համապատասխանի լեռնադահուկային հանգստավայրի նպատակներին՝
  - Տարածքների միջեւ սերտ կապ, առանձնացված տարածքներ՝ պահպանման եւ ավտոկայանատեղերի համար
  - Հանգստավայրի կենտրոն՝ հիմնական հարմարություններով եւ ճոպանուղիներով, որոնք կարող են տեղափոխել մեծ թվով մարդկանց
  - Բնակելի տարածք կենտրոնի հարեւանությամբ, որը հասանելի է ճանապարհներով եւ դահուկուղիներով (ազատ ելումուտով դահուկուղիների սկզբունքով)



Լեռան ստորոտը. ռազմավարական տարածք

- Քաղաքաշինության եւ լեռնադահուկային գոտու կապը ծրագրի հաջողության բանալին է
- Սա ռազմավարական տարածք է՝ նախատեսված սպասարկման եւ տեխնիկական տարածքների, ինչպես նաեւ բոլոր տեսակի այցելուների համար՝ պրոֆեսիոնալ դահուկորդների, սկսնակների, դահուկասահքով չզբաղվող այցելուների
- Այցելուների երթուղին պետք է մանրակրկիտ ուսումնասիրվի՝ նրանց հանգիստն անվտանգ եւ հարմարավետ դարձնելու հաար



Ձնարտադրման համակարգ

ARAGATE INVESTMENTS

- Ձնարտադրման համակարգ (լճի / ձյան համալիր)
- Ձնարտադրման ցանց
- Ջրի պոմպային աղբյուր
- Հարդարող մեքենաների պահպանում



ԼԻՃ 5 հա
Բարձր սարահարթի վրա ստեղծել նոր լիճ
Հիանալի վայր է ամառային արշավների կազմակերպման համար
Օգտագործվելու է 1-ին եւ 2-րդ փուլերում՝ արհեստական ձյան արտադրման համար

Ջրի պոմպակայան՝ արհեստական լճի համար

ԼԻՃ 5 հա
Նոր լիճ՝ լեռնադահուկային գոտում ստեղծելու համար
Օգտագործվելու է 2-րդ եւ 3-րդ փուլերում՝ արհեստական ձյան արտադրման համար

ԼԻՃ 2,1 հա
Վերականգնել գոյություն ունեցող լիճը
Օգտագործվելու է արհեստական ձյան արտադրման եւ ձմեռային մարզաձեւերն ապահովելու համար

Ձնարտադրման ծածկույթի սկզբունքները

- ☑ Միայն 3200 մ բարձրության վրա (ավելի բարձր շատ քամոտ է, դահուկուղիների սահմանին նախընտրելի է տեղադրել փայտե ցանկապատներ)
- ☑ Առնվազն 1 դահուկուղի / ճոպանուղի, որպեսզի հնարավոր լինի բացել ամբողջ լեռնադահուկային գոտին, երբ բնական ձյան ծածկույթը բավական չէ
- ☑ Առավել խիտ ձնածածկույթ համալիրի շրջակայքում (սկսնակների տարածքում, մրցումների տարածքներում, տեսանելի դահուկուղիների վրա)

Սպասարկման եւ տեխնիկական տարածքներ



- Դարեկները տեղակայված են հիմնական ճոպանուղիների վերին հատվածում, որպեսզի արագ մուտք գործեն ամբողջ լեռնադահուկային տարածք
- Ճոպանուղիների պահպանում կայաններում, պարտադիր պահպանում գոնդոլների համար՝ կախված տարածքի հասանելիությունից
- Ճոպանուղիների եւ մեքենաների սպասարկումը հասանելի պետք է լինի ճանապարհից եւ դահուկուղիներից
- Հարդարման մեքենայի պահեստը լեռան ստորոտում + պահեստ ավելի բարձրադիր գոտում՝ վերջինիս շուտ/ուշ բացման դեպքում



4

Լեռնադահուկային համալիրի կառուցման ժամանակացույցը

Լեռնադահուկային գոտի: Զարգացման փուլեր



Փուլ 1

Արագեյթ համալիրի շրջակայքի զարգացում
Սկսնակ / միջին բարդության լեռնադահուկային գոտու ստեղծում
Վերելակների քանակ = 13 /
լեռնադահուկային լանջերի քանակ = 35

Փուլ 2

Լեռան վերին հատվածի զարգացում - ավելի բարդ լեռնադահուկային լանջեր միջին / փորձառու դահուկորդների համար
Վերելակների քանակ = 9
լեռնադահուկային լանջերի քանակ = 25

Փուլ 3

Լեռան ստորին հատվածի զարգացում – զարգացնել համալիրի կապը Արագած գյուղի հետ
Վերելակների քանակ = 6
լեռնադահուկային լանջերի քանակ = 20

Փուլ 1

- **Փուլ 1 (տեւողությունը՝ 3 տարի)**
- Կենտրոնացված է հանգստավայրի շրջանի լանջերի զարգացման վրա լեռնադահուկային զոտում, մինչեւ սպասարկման անհրաժեշտ մակարդակի ապահովումը: Այս փուլի համար հարկավոր են 13 ճոպանուղի մոտավորապես 35 դահուկուղի ապահովելու համար: Այն ներառում է.
  - Հիմնական գոնդոլներ (տեղակայված գոնդոլային ցանցի առաջին երկու հատվածներում, ըստ անհրաժեշտության նաեւ 3-րդ հատվածում)
  - Սկսնակների տարածք եւ սահնակային սպորտի տարածք հանգստավայրին մոտ (որտեղ տեղակայված կլինեն քարշակային ճոպանուղի/փոխակրիչ)
  - Ազատ ելումուտով դահուկուղիների վրա տեղակայված կարճ գոնդոլ, սկսնակների ինչպես նաեւ միջին մակարդակի դահուկորդների համար, որը միացված կլինի բնակելի տարածքի հետ
  - Այս տարածքում գտնվող լրացուցիչ ճոպանուղիներ՝ լեռնադահուկային լանջերը ճիշտ շարժով ապահովելու համար

Փուլ 2

- **Փուլ 2 (սկսվում է 1-ին փուլն ավարտվելուց հետո, տեւողությունը՝ 3-5 տարի)**
- Այս փուլի նպատակն է լեռան վերին հատվածի զարգացումը, որը նախատեսում է «միջազգային» լեռնադահուկային սպորտային գոտու ստեղծում՝ մեծ ուղղահայաց անկմամբ (1600 մ) եւ հասնելով 3000 մ-ից բարձր բարձրությունների:
- Սա հարմար կլինի ավելի պրոֆեսիոնալ դահուկորդների համար: Այս փուլի համար նախատեսված է 9 ճոպանուղի եւ մոտավորապես 25 դահուկուղի: Այն ներառում է.
  - Բարձրության վրա գտնվող մի քանի լեռնադահուկային ճոպանուղիներ՝ 1-ին փուլի գոնդոլների գագաթը Քարի լճին միացնելու համար
  - Ճոպանուղի՝ Քարի լճից դեպի Արագածի հարավային գագաթ
  - Լեռնադահուկային ճոպանուղիներ հիմնական թալվեգի վրա
  - Մի քանի քարշակային ճոպանուղիներ, գոնդոլային ցանցի խտացման համար հիմնական կողմում գտնվող 1-ին փուլին մոտ

Փուլ 3

- **Փուլ 3 (մեկնարկվում է 1-ին փուլն ավարտվելուց հետո , տեւողությունը՝ առնվազն 3 տարի)**
- Կենտրոնացած է լեռան ստորին հատվածի զարգացման վրա՝ 1-ին փուլի գոնդելային ցանցից մինչեւ Արագած գյուղ: Այս փուլի նպատակն է խտացնել եւ մեծացնել լեռնադահուկային գոտու մակերեւույթը եւ դրա ուղղահայաց անկումը, ինչպես նաեւ գյուղերը մերձեցնել դահուկային գոտուն: Սրա համար անհրաժեշտ է նախատեսել երկարաժամկետ հատված՝ կախված ծրագրի տնտեսական իրավիճակից եւ Արագածոտնի մարզի տուրիստական զարգացումներից: Այս փուլն ունի 6 նոր ճոպանուղի, ինչպես նաեւ 20 դահուկուղի:
  - Գոնդոլ՝ Արագած գյուղից դեպի 1-ին փուլի գոնդոլային ցանց
  - Երեք բազկաթոռային ճոպանուղի, տարածքում գտնվող դահուկուղիները սպասարկելու եւ 1-ին փուլի գոնդոլային ցանցին միանալու համար
  - Սկսնակների համար ճոպանուղիներ (փոխակրիչ/շարժվող անցուղի) Արագած գյուղում





Լեռնադահուկային տարածքի չափագրում

Լեռնադահուկային զոտու ընդհանուր քարտեզը



Փուլ 1


Դպահովպին տարածքի սահմանը
Կոնցեսիոն տարածք 5800 հա
Դավանական արհեստական լիճ
Դավանական արհեստական լիճ
Ճանապարհ Արազած գյուղից դեպի Արագելթ համալիր
Արագելթ համալիր
H20 ճանապարհ
12 կմ ճանապարհ դեպի Ամբերդի անցումատարածքից դուրս է, բայց օգտագործվելու է լեռնադահուկային համալիրի շահագործման համար (ավտոպարկ և ծառայության ծառայություններ, ավելամուրջ եվ այլն)
Ճանապարհ Արագելթ համալիրից դեպի Բարի լիճ
Ճանապարհի դեպի Արագելթ համալիր նախագծվելու է հենց գյուղում ունենալու 5 և 3 ճանապարհից մոտավորապես 8 -ից 10 կմ
Գլխավոր հատակագիծ
Վերնագիր
Լեռնադահուկային զբոսու ընդհանուր քարտեզ - Բոլոր փուլերը
Թղթի չափ
1:10 000
Պայմանական նշաններ :
Ուրվագիծ (նշմ)
Հեշտ տարածք
Սնունդների համար լանջեր
Միջին բարդության տարածք
Կոմբոցիոն լանջեր
Ընդլայնված տարածք
Միջին բարդության լանջեր
Փորձառուների տարածք
Փորձառու դահուկորդների համար լանջեր
Ցուցադրման ցանց
Ցոպանուղիներ - Փուլ 1
Ցոպանուղիներ - Փուլ 2
Ցոպանուղիներ - Փուլ 3
Սահնակավազդություն
Դահուկավազք
Ձմեռային սարդտառների տարածք
Արհեստական լիճ
Ճանապարհ
Լեռնային ռեստորաններ
Կամրջաձև
Վերանայապատկերային կետեր

Փուլ 1

Ճոպանուղու բնութագիրը

ՎԵՐԵԼԱԿԻ ԱՆՎԱՆՈՒՄ	ՎԵՐԵԼԱԿԻ ՏԵՍԱԿ	ՈՒՂՂԱՀԱՅԱՑ ԵՐԿԱՐՈՒԹՅՈՒՆ (մ)	ԻՐԱԿԱՆ ԵՐԿԱՐՈՒԹՅՈՒՆ (մ)	ԺԱՄԱՅԻՆ ՀՁՈՐՈՒԹՅՈՒՆ (ժ/ժամ)	ՈՒՂՂԱՀԱՅԱՑ ՎԵՐԵԼՔ (մ)	ՆԵՐՔԻՆ ԲԱՐՁՐՈՒԹՅՈՒՆ (մ)	ՎԵՐԻՆ ԲԱՐՁՐՈՒԹՅՈՒՆ (մ)	ԱՐԱԳՈՒԹՅՈՒՆ (մ/վ)	ՏԵՎՈՂՈՒԹՅՈՒՆ (ր)	ՄԻՋԻՆ ԹԵՔՈՒԹՅՈՒՆ (%)
Փուլ 1										
A Բաժին 1	Գոնդոլ	1870	1903	2400	355	2390	2745	6	5,3	19%
A Բաժին 2	Գոնդոլ	1530	1544	2400	210	2745	2955	6	4,3	14%
A Բաժին 3	Գոնդոլ	1900	1912	2400	215	2955	3170	6	5,3	11%
B	Գոնդոլ	1165	1180	2000	190	2390	2580	6	3,3	16%
C	Անջատվող վերելակ	1575	1592	2000	230	2580	2810	5	5,3	15%
D	Անջատվող վերելակ	1655	1677	2000	270	2685	2955	5	5,6	16%
E	Դահուկային վերելակ	420	438	800	125	2390	2515	2,5	2,9	30%
F	Ֆիքսված վերելակ	500	515	1500	125	2390	2515	2	4,3	25%
G	Դահուկային վերելակ	230	232	800	30	2390	2420	2,5	1,5	13%
H	Դահուկային վերելակ	185	187	800	30	2390	2420	2,5	1,2	16%
J	Դահուկային վերելակ	545	552	800	85	2385	2470	2,5	3,7	16%
K	Դահուկային վերելակ	210	215	800	45	2390	2435	2,5	1,4	21%
L	Փոխատար	125	125	1000	10	2390	2400	1	2,1	8%
Ընդհանուր փուլ 1				**19 700 դահ/ժ**						

Փուլ 1

Դահուկուղիների բնութագիրը

- Դյուրին եւ միջին բարդության դահուկուղիներն ամենակարեւորն են լեռնադահուկային հանգստավայրում
- 1-ին փուլում չկան փորձառուների համար դահուկուղիներ, քանի որ տեղանքը բավարար թեքություն չունի

Փուլ 1	Քանակ	Երկարություն (կմ)	Մակերես (հա)	Վերաբաժանում (%)
ՀԵՇՏ	14	12,2	30,3	27%
ՄԻՋԻՆ	14	23,1	68,7	62%
ԴԺՎԱՐ	6	4,2	12,5	11%
ՓՈՐՁԱՌՈՒ	0	0,0	0,0	0%
ԸՆԴՀԱՆՈՒՐ	**34**	***39,5***	***111,5***	***100%***



- Արհեստական ձնածածկույթը = **43 հա (դահուկուղիների մակերեսի 39%-ը)**

Չափագրում

- Դահուկուղիների հզորությունը մեկ ժամում՝ **20 000-30 000 դահուկորդ/ժամ**
- Ճոպանուղու հզորությունը մեկ ժամում՝ **20 000 դահուկորդ/ժամ**

→ **Խելամիտ հավասարակշռություն վերելքի եւ վայրէջքի հզորությունների միջեւ**

- 1-ին փուլում լեռնադահուկային մարզուղու հզորությունը մեկ վայրկյանում ≈ **9000 դահուկորդ**

Փուլ 2


Դպահովպային տարածքի սահմանը
Կոնցեպտին տարածք 5800 հա
Հավանական արհեստական լիճ
Հավանական արհեստական լիճ
Արագելթ համալիր
Ճանապարհի Արագած գյուղից դեպի Արագելթ համալիր
H20 ճանապարհի
12 կմ ճանապարհի դեպի Ամբերդի անցումամտարածքից դուրս է, բայց օգտագործվելու է լեռնադահուկային համալիրի շահագործման համար (ավտոպարկ և ծնունդների ծառայություններ, ավելամատակարարում եվ այլն)
Ճանապարհի Արագելթ համալիրից դեպի Բարի լիճ
Ճանապարհի դեպի Արագելթ համալիր
նախագծվելու է հենց գյուղերում ունենալու 5 և 3 ճանապարհից մոտավորապես 8 -ից 10 կմ
Գլխավոր դահուկանցքի տարածք գյուղերի միջով
Միայն գիշերային գազանց, տարածքորոմանի մեն արգիանվում
Գլխավոր
Արագած լեռ
Արագածոտն - մարզ
Գործողություն
Լեռնադահուկային զուտու զարգացում Արագած լեռան վրա
Վերնագիր
Լեռնադահուկային զուտու ընդհանուր քարտեզ - Բոլոր փուլերը
Թղթի չափ
1:10 000
1437 x 841 մմ
AFW-20F_N0746-A
Փոփոխության նպատակները
Գծագրի տեսակը
Դպահովպային տարածքի սահմանը
Դպահովպային տարածքի սահմանը
Դպահովպային տարածքի սահման

Փուլ 2

Ճոպանուղու բնութագիրը

ՎԵՐԵԼԱԿԻ ԱՆՎԱՆՈՒՄ	ՎԵՐԵԼԱԿԻ ՏԵՍԱԿ	ՈՒՂՂԱՀԱՅԱՑ ԵՐԿԱՐՈՒԹՅՈՒՆ (մ)	ԻՐԱԿԱՆ ԵՐԿԱՐՈՒԹՅՈՒՆ (մ)	ԺԱՄԱՅԻՆ ՀՁՈՐՈՒԹՅՈՒՆ (ժ/ժամ)	ՈՒՂՂԱՀԱՅԱՑ ՎԵՐԵԼՔ (մ)	ՆԵՐՔԻՆ ԲԱՐՁՐՈՒԹՅՈՒՆ (մ)	ՎԵՐԻՆ ԲԱՐՁՐՈՒԹՅՈՒՆ (մ)	ԱՐԱԳՈՒԹՅՈՒՆ (մ/վ)	ՏԵՎՈՂՈՒԹՅՈՒՆ (ր)	ՄԻՋԻՆ ԹԵՔՈՒԹՅՈՒՆ (%)
Փուլ 2										
A	Դահուկային վերելակ	1020	1031	800	150	3010	3160	2,5	6,9	15%
B	Դահուկային վերելակ	1320	1330	800	165	2910	3075	2,5	8,9	13%
C	Անջատվող վերելակ	2435	2493	2000	535	2705	3240	5	8,3	22%
D	Անջատվող վերելակ	1325	1347	2000	240	3000	3240	5	4,5	18%
E	Դահուկային վերելակ	600	615	800	135	3140	3275	2,5	4,1	23%
F	Անջատվող վերելակ	1230	1261	2000	280	3140	3420	5	4,2	23%
G	Ֆիքսված վերելակ	690	729	1500	235	3185	3420	2	6,1	34%
H	Ֆիքսված վերելակ	700	734	1500	220	3200	3420	2	6,1	31%
J	Ճոպանուղի	3410	3479	400	690	3200	3890	8	7,2	20%
Ընդհանուր փուլ 2				**11 800 դահ/ժ**						

Փուլ 2

Դահուկուղիների բնութագիրը

- Վերին դահուկուղիները, ինչպես նաեւ բարդ լեռնադահուկային տեղանքները նախատեսված են միջակ, փորձառու եւ պրոֆեսիոնալ դահուկորդների համար
- Ազատ դահուկասահքի համար նախատեսված ընդարձակ, բաց տարածք (նշված չէ նկարներում)

Փուլ 2	Քանակ	Երկարություն (կմ)	Մակերես (հա)	Վերաբաժանում (%)
ՀԵՇՏ	4	9,1	22,1	20%
ՄԻՋԻՆ	6	11,0	33,1	30%
ԴԺՎԱՐ	10	16,2	48,5	44%
ՓՈՐՁԱՌՈՒ	3	1,9	5,7	5%
ԸՆԴՀԱՆՈՒՐ	**23**	***38,2***	***109,5***	***100%***



- Արհեստական ձնածածկույթը = **25 հա (դահուկուղիների մակերեսի 23%-ը)**

Չափագրում

- Դահուկուղիների հզորությունը մեկ ժամում՝ **11 000-17 000 դահուկորդ/ժամ**
- Ճոպանուղու հզորությունը մեկ ժամում՝ **12 000 դահուկորդ/ժամ**

→ **Խելամիտ հավասարակշռություն վերելքի եւ վայրէջքի հզորությունների միջեւ**

- 2-րդ փուլում դահուկային տարածքի հզորությունը մեկ ակնթարթում ≈ **6500 դահուկորդ**

Փուլ 3


Դպահովպային տարածքի սահմանը
Կոնցեպտին տարածք 5800 հա
Դավանական արհեստական լիճ
Դավանական արհեստական լիճ
Ճանապարհ Արագած գյուղից դեպի Արագելթ համալիր
Արագելթ համալիր
H20 ճանապարհ
12 կմ ճանապարհ դեպի Ամբերդի անցումատարածքից դուրս է, բայց օգտագործվելու է լեռնադահուկային համալիրի շահագործման համար (աստիճանի և ձմեռային ծառայությունների, անվտանգության եվ այլն)
Ճանապարհ Արագելթ համալիրից դեպի Բարի լիճ
Ճանապարհ դեպի Արագելթ համալիր
նպատակներում է հենց գոյություն ունեցող 5 և 3 ճանապարհից մոտավորապես 8 թվ 10 կմ
Գործողություն
Լեռնադահուկային զուտու զարգացում Արագած լեռան վրա
Վերնագիր
Լեռնադահուկային զուտու ընդհանուր քարտեզ - Բոլոր փուլերը
Թղթի չափ
1437 x 841 մմ
1/10 000
AFM-20F_N0746-A
Դպրոցական տարածք
Դպրոցական տարածքի սահմանները
Դպրոցական տարածքի սահմանները
Դպրոցական տարածքի սահմանները

Փուլ 3

- **Ճոպանուղու բնութագիրը :**

ՎԵՐԵԼԱԿԻ ԱՆՎԱՆՈՒՄ	ՎԵՐԵԼԱԿԻ ՏԵՍԱԿ	ՈՒՂՂԱՀԱՅԱՑ ԵՐԿԱՐՈՒԹՅՈՒՆ (մ)	ԻՐԱԿԱՆ ԵՐԿԱՐՈՒԹՅՈՒՆ (մ)	ԺԱՄԱՅԻՆ ՀՁՈՐՈՒԹՅՈՒՆ (ժ/ժամ)	ՈՒՂՂԱՀԱՅԱՑ ՎԵՐԵԼՔ (մ)	ՆԵՐՔԻՆ ԲԱՐՁՐՈՒԹՅՈՒՆ (մ)	ՎԵՐԻՆ ԲԱՐՁՐՈՒԹՅՈՒՆ (մ)	ԱՐԱԳՈՒԹՅՈՒՆ (մ/վ)	ՏԵՎՈՂՈՒԹՅՈՒՆ (ր)	ՄԻՋԻՆ ԹԵՔՈՒԹՅՈՒՆ (%)
Փուլ 3										
A	Գոնդոլա	2890	2913	2400	365	2005	2370	6	8,1	13%
B	Անջատվող վերելակ	1940	1968	2000	330	2325	2655	5	6,6	17%
C	Ֆիքսված վերելակ	1415	1497	1500	490	2450	2940	2	12,5	35%
D	Անջատվող վերելակ	2040	2066	2000	325	2615	2940	5	6,9	16%
E	Անջատվող վերելակ	1460	1473	2000	195	2385	2580	5	4,9	13%
F	Դահուկային վերելակ	600	602	800	50	2005	2055	2,5	4,0	8%
Ընդհանուր փուլ 3				**10 700 դահ/ժ**						

Փուլ 3

Դահուկուղիների բնութագիրը

- Վերին դահուկուղիները, ինչպես նաեւ բարդ լեռնադահուկային տեղանքները նախատեսված են միջակ, փորձառու եւ պրոֆեսիոնալ դահուկորդների համար
- Ազատ դահուկասահքի համար նախատեսված ընդարձակ, բաց տարածք (նշված չէ նկարներում)

Փուլ 3	Քանակ	Երկարություն (կմ)	Մակերես (հա)	Վերաբաժանում (%)
ՀԵՇՏ	1	0,7	2,0	2%
ՄԻՋԻՆ	15	38,3	86,8	75%
ԴԺՎԱՐ	4	5,6	16,7	14%
ՓՈՐՁԱՌՈՒ	3	3,6	10,8	9%
ԸՆԴՀԱՆՈՒՐ	**23**	***48,1***	***116,3***	***100%***



- Արհեստական ձնածածկույթը = **41 հա (դահուկուղիների մակերեսի 35%-ը)**

Չափագրում

- Դահուկուղիների հզորությունը մեկ ժամում՝ **10 000-16 000 դահուկորդ/ժամ**
- Ճոպանուղու հզորությունը մեկ ժամում՝ **10 700 դահուկորդ/ժամ**

→ **Խելամիտ հավասարակշռություն վերելքի եւ վայրէջքի հզորությունների միջեւ**

- 2-րդ փուլում դահուկային տարածքի հզորությունը մեկ վայրկյանում ≈ **5500 դահուկորդ**

Երեք փուլի ավարտից հետո լեռնադահուկային զոտին կարող է հյուրընկալել ≈ **22 000 դահուկորդի**

Դահուկուղիների ընդհանուր հզորությունը

ARAGATE INVESTMENTS

Դահուկուղիների բնութագիրը

- Ծրագրի ավարտից հետո դահուկուղիների 75%-ը նախատեսված է լինելու սկսնակների եւ միջին մակարդակի դահուկորդների համար
- Դահուկուղիների քառորդ մասը նախատեսված է լինելու ավելի փորձառու դահուկորդների համար՝ ընդգրկելով հատկապես լեռան վերին հատվածը

Բոլոր փուլերը	Քանակ	Երկարություն (կմ)	Մակերես (հա)	Վերաբաժանում (%)
ՀԵՇՏ	19	21,9	54,4	16%
ՄԻՋԻՆ	35	72,4	188,6	56%
ԴԺՎԱՐ	20	25,9	77,8	23%
ՓՈՐՁԱՌՈՒ	6	5,5	16,6	5%
ԸՆԴՀԱՆՈՒՐ	**80**	***125,8***	***337,3***	***100%***



- Արհեստական ձնածածկույթը = **109 հա (դահուկուղիների մակերեսի 32%-ը)**

Չափագրում

- Դահուկուղիների հզորությունը մեկ ժամում՝ **40 000-63 000 դահուկորդ/ժամ**
- Ճոպանուղու հզորությունը մեկ ժամում՝ **42 200 դահուկորդ/ժամ**

3 փուլի ավարտից հետո լեռնադահուկային գոտին կարող է հյուրընկալել ≈ **22 000 դահուկորդի**

Տեղագրական քարտեզ. կոնցեսիոն տարածք



Տեղագրական քարտեզ. Գնվող տարածք



Կարմիրով նշված տարածքը պետք է գնվի լեռնադահուկային հանգստավայրի, անշարժ գույքի եւ մի շարք ծառայությունների (խանութներ, ռեստորաններ, հյուրանոցներ, ճանապարհներ, սպասարկման տարածք եւ այլն) զարգացման համար:

Ճանապարհների կառուցման եւ բարելավման ծրագիր





Ներդրում երեք փուլով

Ներդրում երեք փուլով

- Միայն լեռնադահուկային զոտու հարմարությունների համար
- Հիմնվելով Եվրոպական չափորոշիչների եւ գների վրա

	ՓՈՒԼ 1	ՓՈՒԼ 2	ՓՈՒԼ 3	Բոլոր փուլերը
Դահուկուղու հողային աշխատանքների իրականացում	6,60 Մլն€	10,35 Մլն€	6,50 Մլն€	23,45 Մլն€
Ճոպանուղիներ	66,00 Մլն€	57,21 Մլն€	41,27 Մլն€	164,48 Մլն€
Արհեստական ձյուն				
Դահուկուղիների ցանց	*6,98 Մլն€*	*5,43 Մլն€*	*6,20 Մլն€*	*18,60 Մլն€*
Ջնարտադրման համալիր (կառույց)	*0,99 Մլն€*	*0,50 Մլն€*		*1,49 Մլն€*
Արհեստական լիճ	*8,80 Մլն€*	*4,40 Մլն€*		*13,20 Մլն€*
				33,29 Մլն€
Տեխնիկական / Սպասարկման տարածք	2,48 Մլն€	1,93 Մլն€	1,93 Մլն€	6,33 Մլն€
Պաշտպանիչ ցանցեր / Ձյան համար նախատեսված սկուտերներ	2,75 Մլն€	2,75 Մլն€	2,20 Մլն€	7,70 Մլն€
Դահուկուղու ցուցանակ	1,65 Մլն€	1,10 Մլն€	1,10 Մլն€	3,85 Մլն€
Ձյան հարդարման մեքենաներ	2,89 Մլն€	2,23 Մլն€	2,15 Մլն€	7,26 Մլն€
Հողային աշխատանքների շարժիչներ	1,65 Մլն€	1,10 Մլն€	0,00 Մլն€	2,75 Մլն€
Պաշտպանություն ձնահյուսքից	0,55 Մլն€	4,40 Մլն€	0,55 Մլն€	5,50 Մլն€
Այլ հարմարություններ				
Տոմսերի վաճառք	*0,55 Մլն€*	*0,28 Մլն€*	*0,28 Մլն€*	1,10 Մլն€
Էլեկտրաէներգիայի մատակարարում	*2,75 Մլն€*	*3,30 Մլն€*	*2,20 Մլն€*	8,25 Մլն€
Ձյան համար փայտե ցանկապատներ	*1,00 Մլն€*	*1,43 Մլն€*	*0,86 Մլն€*	3,29 Մլն€
Գործարկման նյութեր	*0,88 Մլն€*	*0,88 Մլն€*	*0,88 Մլն€*	2,65 Մլն€
ԸՆԴԱՄԵՆԸ	106,51 Մլն€	97,27 Մլն€	66,10 Մլն€	269,89 Մլն€